ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2024 թվականի N476Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N 30-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի Շահումյան փողոցի շ4ա բն3 հասցեի բնակիչներ Վ. Նավարսադյանի և Լ. Նավարսատյանի 2024 թվականի հոկտեմբերի 18-ի դիմումները, ինչպես նաև 2024 թվականի նոյեմբերի 14-ին ՀՀ «Սյունիքի մարզ» նոտարական տարածքի նոտար Շողեր Բաղումյանի կողմից ծննդյան վկայականի թարգմանության իսկությունը վավերացնելու վերաբերյալ նոտարական ակտի պատճենը՝

որոշում եմ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2003 թվականի հունիսի 19-ի «Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի Շահումյան փողոցի N4Ա շենքի N3 բնակարանը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով անհատույց Անժելա Ենոքյանի ընտանիքին հատկացնելու մասին» N 30-Ա որոշման 1-ին կետում «Նավասարդյան Վազգեն» բառերը փոխարինել «Նավարսադյան Վազգեն» բառերով և «Նավասարդյան Լիլիա» բառերը փոխարինել «Նավարսատյան Լիլյա» բառերով:

2024-11-18 16:02:59 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2024թ. նոյեմբերի 18
ք. Կապան